ԱՂԲԻԱՆՈՍՆԵՐԻ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏՈՀՄԸ

ՎԱՐԴԱՆՅԱՆ Վ.Մ.

Հայաստանի IV-V դդ. եկեղեցական պատմության մեջ աչքառու դեր ունեին Աղբիանոսյան տան հոգևորականները: Տոհմի նախնի է հիշվում Աղբիանոսը: Ըստ Ագաթանգեղոսի, Գրիգոր Լուսավորիչը «զոմանս յորգւոց քրմացն... ձեռնասունս առնէր. փոյթ ուսման ի վերայ ունէր ընդ հոգևոր խնամով և երկիւղիս սնուցանել... որոց առաջնոյն՝ Աղբիանոս անուն, որ ապա կողմանցն Եփրատական գետոյն լինէր վերակացու»[1]: Պատմագրի հավաստմամբ, Աղբիանոսը այն տասներկու քրմորդիներից էր, որոնց Գրիգոր Լուսավորիչը ձեռնադրեց եպիսկոպոս՝: Գրիգորն այդպիսով ջանում էր հնարավորինս ցրել երկրի գիցաշունչ մթնոլորտը: Այդ կերպ, Հայոց եկեղեցու նվիրապետական համակարգը համալրվեց քրմական դասի ներկայացուցիչներով: Իր հերթին, քրմությունն, ընդառաջ գնալով Գրիգոր Լուսավորչին, հույս էր ակնկալում պահպանել իր առանձնաշնորհյալ կացությունը, հողատիրությունները և հայ մտաշխարհում ունեցած առաջնությունը: Ագաթանգեղոսի հունարեն խմբագրության (Վարքի) մեջ ասվում է, որ Գրիգորը Հայոց Տրդատ III թագավորին առաջարկում է «քրիստոնյա դարձնել քրմերին», որոնք միակամորեն ընդունում են նոր կրոնը՝:

Անչուշտ, Գրիգորը չի սահմանափակվել միայն քրմորդիներին եպիսկոպոսներ կարգելով: Ագաթանգեղոսը վկայում է, որ մեհենապատկան կալվածների հետ միասին հեթանոսական տաճարների սպասավոր քրմերը «ի ծառայութիւն նուիրեցին եկեղեցւոյ սպասաւորութեան»՝: Գրիգոր Լուսավորչի կանխատես ձեռնարկումների շնորհիվ Հայ առաքելական եկեղեցու ծիսակարգի մեջ մուծվեցին դարերից ի վեր ժողովրդին հոգեհարազատ դարձած դիցավանդ ծեսեր, հավատալիքներ: Այդպիսով հնարավոր դարձավ ազգայնացնել քրիստոնեությունը՝ նրան ներարկելով դիցական ժամանակների չունչն ու ոգին:

Ագաթանգեղոսի հունարեն խմբագրության հավաստմամբ՝ Գրիգորի ժամանակ Հայաստանում քրիստոնեացված քրմերն անցյալում բերվել էին Հունաստանից՝ Հայոց մեհյաններում սպասարկելու համար[5]: Հայաստանի հեթանոսական տաճարներում հույն քրմերի ծառայության մասին վկայված է նաև Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ՝: Հույն քրմերը Հայաստանում հելլենիստական քաղաքակրթության նախանձախնդիր սերմանողներն էին և

---

[1] *Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխ. Գ. Տէր-Մկրտչեանի և Ստ. Կանայեանցի, Տփղիս, 1909, էջ 441-442:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Garitte G., Documents pour l'etude du livre d'Agathange, Vaticano, 1946, p. 101.*

[4] *Ագաթանգեղոս, էջ 406: Հայոց կանոնագրքում նշվում է, որ Տրդատ Մնծը «ոչ սակաւ տայր աւժիտս մերձակայից իւրոց սպասաւորացն, եւ որդւոցն քրմաց պարգևէր բազում պարգեւս, ասելով եթե՝ «Արդէն հարիւրապատիկ առնուցուք ինչս և ստացուածս, եւ երախայրիս եւ պտուղս յեկեղեցւոջ Աստուծոյ...» (տե՛ս Կանոնագիրք Հայոց, Բ, աշխ. Վ.Հակոբյանի, Ե., 1971, էջ 231):*

[5] *Garitte G., Documents, p. 101.*

[6] *Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխ. Մ. Աբեղեանի և Ս. Յարութիւնեանի, Տփղիս, 1913, էջ 127:*

ավելի վաղ վերհասու եղան քրիստոնեական կրոնի քարոզած ճշմարտությանն ու այդ հավատքի էությանը:

Ագաթանգեղոսը Գրիգորի ձեռնադրած 12 եպիսկոպոսներից սոսկ երկուսի՝ Աղբիանոսի ու Եվտաղիոսի առաջնորդությանը ենթակա շրջաններն է հիշում, նկատի առնելով հետագայում նրանց ենթակա թեմերը: Նա մնացած տասը եպիսկոպոսների անուններն է սոսկ նշում[7]: Պատմագիրը հիշյալ եպիսկոպոսների մեջ առաջնություն է վերապահում Աղբիանոսին՝ նրան հիշելով առաջին տեղում: Առաջնությունը կարող էր դրսևորվել ոչ միայն քրիստոնեության տարածման գործում Գրիգոր Լուսավորչին Աղբիանոսի ցուցաբերած օժանդակության, այլև Տրդատ III-ի հետ նախկինում ունեցած նրա մերձակցության շնորհիվ: Այն շարունակվեց նաև քրիստոնեության տարածումից հետո: Քրմորդիներին նոր կրոնի սպասավորներ կարգելու գործում, անշուշտ, էական դեր էր վերապահված Տրդատ III-ին: Քրիստոնեությունը պետականորեն ընդունվեց Հայաստանի վերնախավի կողմից, որի գերազդեցիկ թևն էր քրմությունը: Ուսյալ և հունարենին ու ասորերենին քաջագիտակ, բանավոր քարոզչությամբ հայ լեզուն ճոխացրած այդ խավը, բնականաբար, իր նպաստը բերեց նոր կրոնի պետականացման գործին, ժողովրդին հասու դարձրեց հունարեն և ասորերեն լեզուներով գրված քրիստոնեաբանական գրքերին, նոր կրոնի գաղափարաբանությանը: Ագաթանգեղոսը նշում է, որ Աղբիանոսը Գրիգորի կողմից առաջնորդ է կարգվել հեթանոսության ազդեցիկ և ընդվզուն կենտրոններից մեկում՝ «կողմանցն Եփրատական գետոյն»[8] (նկատի ունի Մանազկերտ քաղաքն իր գավառով): Ագաթանգեղոսի արաբերեն խմբագրության մեջ ասվում է, որ Աղբիանոսը նշանակվել է Տարոնի ու Բզնունիքի հովվապետ[9]: Բայց մատենագիրները սովորաբար Աղբիանոսյանների առաջնորդությանը ենթակա թեմ են հիշում Մանազկերտը: Այդ տոհմը հավանաբար սերում էր Մանավազյաններից: Սկզբնապես Աղբիանոսը եկեղեցաթեմ չուներ, բայց իր ազդեցիկ դերի շնորհիվ Գրիգորը «զԱղբիանոս զայր ճշմարիտ և աստուածասէր՝ վերակացու թողոյր արքունական դրան բանակին»[10], այսինքն՝ Այրարատ նահանգում, որտեղ նա, հավանաբար, վարում էր Գրիգորի տեղապահի պաշտոնը: Այդպիսով, քրմական դասն, ի դեմս Աղբիանոսի, կարողացավ առաջնակարգ դիրքերի հասնել նաև Հայաստանի քաղաքական կենտրոնում: Ենթադրվում է, որ Ագաթանգեղոսի հիշատակած 12 եպիսկոպոսները Հայոց հայրապետանոցին կից ժողով էին կազմում[11]: Եթե նման հեղինակավոր կաճառը, իրոք, ձևավորվել է քրմության միջավայրից ելած հոգևորականներից, ապա դա կարող է միայն վկայել նրանց գերազդեցիկ գործառնության մասին:

[7] Ն.Ադոնցի կարծիքով, հիշյալ 12 եպիսկոպոսները, ի բացառյալ Տիրիկեսի ու Կիրակոսի, պետք է լինեին 591թ. Պարսկաստանի ու Բյուզանդիայի միջև Հայաստանի երկրորդ բաժանմամբ կայսրությանն անցած հայկական գավառներից (տե՛ս Асонц Н., Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, с. 343):

[8] Ագաթանգեղոս, էջ 441:

[9] Марр Н., Крещение армян, грузин, абхазов, аланов св. Григорием (арабская версия), СПб., 1905, с. 136 – 137). Հովհան Մամիկոնյանի ավանդախառն պատումի համաձայն, Աղբիանոսը մասնակցել է Տարոնի Ս.Կարապետ վանքի հիմնակմանը այդ վանքի առաջին վանահայր Զենոբ Գլակի հետ միասին (տե՛ս Ցովհան Մամիկոնեան, Պատմութիւն Տարօնոյ, աշխ. Ա. Աբրահամյանի, Ե., 1941, էջ 101):

[10] Ագաթանգեղոս, էջ 442:

[11] Տե՛ս Օրմանեան Մ., Ազգապատում, Ա, Կ.Պոլիս, 1912, էջ 99:

Ագաթանգեղոսի հունարեն խմբագրությունը Աղբիանոսին հիշում է նաև Աղբինոս (Ալբինոս) ձևով[12] : Նույնն ենք տեսնում նաև արաբերեն Վարքում, որը թարգմանված է Ագաթանգեղոսի հունարեն խմբագրությունից: Մ.Չամչյանը կարծում է, թե Աղբիանոսը և Աղբինոսը (Ալբոսը) տարբեր անձեր են, և որ Ալբոսը «եղև եպիսկոպոս արքունի դրան»[13] : Սակայն, ինչպես տեսանք, «արքունի դրան եպիսկոպոս» (կաթողիկոսական տեղապահ) էր կարգվել նույն Աղբիանոսը: Մեկ այլ ենթադրության համաձայն, Աղբիանոսը (Աղբիոսը) ավելի վաղ է ապրել, քան Աղբիանոսը և մինչև Գրիգոր Լուսավորչի հանդես գալը եղել է Հայաստանում հովվող եկեղեցականներից մեկը[14] :

Հայերեն Ագաթանգեղոսը հիշում է միայն Աղբիանոս անունը: Ըստ երևույթին, վերջինիս կրկնակ անունները հետևանք են այն փաստի, որ հունարեն խմբագրության հեղինակն օգտվել է Ագաթանգեղոսի երկասիրության տարբեր ձեռագրերից, որոնց մեջ եղել է նաև Ալբիոս անվանաձևը[15] :

Ագաթանգեղոսը վկայում է, որ Գրիգորի հորդորմամբ «տայր հրաման թագաւորն Տրդատ՝ իւրոյ իշխանութեանն յաշխարհաց և ի գաւառաց բազմութիւն մատաղ մանկտւոյ ածել յարուեստ դպրութեան, և կարգել ի վերայ հաւատարիմ վարդապետս. առաւել զազգս պղծագործ քրմացն և զմանկունս նոցա ի նոյն ժողովել... Եւ զնոսա յերկուս բաժանեալ, զոմանս յԱսորի դպրութիւն կարգեալ, և զոմանս ի Հելլէն»[16] : Հասկանալի է՝ նշյալ դպրոցներում դասավանդել կարող էին քրմական դասի ներկայացուցիչները, քանի որ նրանք էին ուսյալ դասը: Դպրոցները բացելուց հետո Գրիգորը, Աղբիանոսին թողնելով իրեն տեղապահ, հեռանում է լեռներ՝ ճգնակեցության: Նորաբաց դպրոցներն Այրարատում էին՝ Վաղարշապատում: Նրանց վերահսկողությունը հարկ է, որ կատարեր Աղբիանոսը, որը, հավանաբար, նաև դասավանդում էր դպրոցներում: Իհարկե, դպրոցների նկատմամբ հոգածու էր նաև Գրիգոր Լուսավորիչը, որը, երբ անհրաժեշտ էր, այցելում էր մայրաքաղաք և չէր վարանում «զօրացուցանել զաշակերտեալսն ճշմարտութեան հոգւով... Եւ յորդորագոյնս և պարարտագոյնս և անփակ բերանով զվտակս վարդապետութեանն ի սիրտս լսողացն սերմանեալ ծաւալեցուցանէր...»[17] : Դպրոցները նպատակ ունեին պատրաստել նոր կրոնի սերմնացաններ: Այդ գործին բանական ու նպատակասլաց ընթացք տալու համար անհրաժեշտ էր Աղբիանոսի և, ընդհանրապես, քրմության աջակցությունը:

Աղբիանոսին իրեն տեղապահ նշանակելով՝ Գրիգորը բնավ էլ հակված չէր նրան իր հաջորդը կարգելու գաղափարին: Այրարատում Աղբիանոսը երկար չմնաց, այլ կարգվեց «վերակացու» (եպիսկոպոս)«կողմանցն Եփրատական գետոյն»: Այդ է պատճառը, որ ոչ մի աղբյուրում Աղբիանոսը չի հիշվում Այրարատի եպիսկոպոս, քանի որ Այրարատը մնում էր Գրիգորի իրավասության տակ[18] :

---

[12] Garitte G., Documents, p. 102-103.

[13] Չամչեան Մ., Պատմութիւն Հայոց, Ա, Վենետիկ, 1784, էջ 396:

[14] Անանեան Պ., Քրիստոնեութեան հետքեր Հայաստանի մէջ Ս.Գրիգոր Լուսաւորչի քարոզութենէն առաջ, Վենետիկ, 1979, էջ 26-27:

[15] Ադոնց Հ., նշվ. աշխ., էջ 341:

[16] Ագաթանգեղոս, էջ 438:

[17] Նույն տեղում, էջ 444:

[18] Հմմտ. Տէր-Մինասեանց Ե., Հայոց եկեղեցու յարաբերութիւնները Ասորւոց եկեղեցիների հետ, Ս.Էջմիածին, 1908, էջ 38-39:

Աղբիանոսին կարևոր գործառույթներով օժտելը և կաթողիկոսական տեղապահ թողնելը նպատակ էր հետապնդում նաև նոր կրոնի հետ հեթանոսության և նրա մոլեկրոն հետևորդների ու սպասավորների հաշտեցումը: Աղբիանոսի ջանքերով և Տրդատ Մեծի ու Գրիգոր Լուսավորչի լայն աջակցությամբ քրմորդիների զգալի մասն ընդգրկվեց նորաբաց դպրոցներում՝ ուր, ինչպես տեսանք, ուսուցումը տարվում էր ժամանակի քրիստոնեաբանության լեզուներով՝ հունարեն և ասորերեն: Դպրոցների շրջանավարտները, հոգևորապես վերակոփվելով, դարձան նոր կրոնի ջերմեռանդ սերմանողներ: Հասկանալի է, նրանք պետք է ապահովվեին նաև նյութապես՝ համալրելով քահանայական դասը: Քրմության քրիստոնեացված սերունդները Աղբիանոսի առաջնորդությամբ հավատարիմ մնացին նաև Հայոց ազգային հինավուրց ավանդներին, ջանալով դրանք ներհյուսել քրիստոնեությանը: Անշուշտ, նրանց ընդառաջելով էր, որ հելլենաճաշակ Գրիգոր Լուսավորիչը չվարանեց քրիստոնեացնել հեթանոսական առավել ազդեցիկ տոնախմբությունները ու խորհրդածեսերը: Աղբիանոսն ու մյուս քրմերը, այդպիսով, էականորեն նպաստեցին քրիստոնեության ազգայնացմանը: Նրանք, ինչպես հավաստում է Ագաթանգեղոսը, դարձան նաև քրիստոնեաբաններ՝ «մարգարէադետք և առաքելածանօթք և աւետարանաժառանգք»[19]: Անշուշտ, Աղբիանոսի և մյուս քրմերի ու նրանց ժառանգների օգնությունը զգալապես սատարեց Հայոց ծիսական կարգը և վանական-եկեղեցական-համերկրային համակարգը ստեղծելու գործին:

Հայաստանում քրիստոնեությունն առաջին հերթին ընտանի դարձավ վերնախավում, առանց որի, բնականաբար, նոր կրոնը չէր կարող պետականացվել: Բայց այն երկար ժամանակ խորթ մնաց ժողովրդի լայն զանգվածներին: Այդ բացը լրացնելու համար անհրաժեշտ էր ազգայնացնել քրիստոնեությունը, հայերեն լեզվով հանրությանը մատուցել նրա գաղափարները: Այդ գործում էական էր քրմության դերը, քանի որ իբրև կրթված ու գրագետ խավ, նա կարող էր նոր կրոնի գաղափարները բանավոր մատուցել ունկնդիրներին՝ նրանց հասցնելով քրիստոնեության քարոզած ճշմարտությունները: Այդ ընթացքում, բնականաբար, պետք է որ ավելի մշակվեր Հայոց լեզուն: Դավանական և պաշտամունքային բազմապիսի խնդիրներն արտացոլում գտան Գրիգոր Լուսավորչի անունով մեզ հասած կանոնական գրություններում[20], որոնցով հարկ է որ առաջնորդվեր կաթողիկոսական տեղապահը՝ քրիստոնեության առջև ծառացած դժվարալույծ հարցերի պատասխանները գտնելու համար: Բայց, ինչպես կարելի է կռահել Ագաթանգեղոսի հունարեն խմբագրությունում եղած մի վկայությունից, երբ Գրիգոր Լուսավորիչը դիմեց ճգնակեցության, երկրում խաթարվեցին ներեկեղեցական հարաբերությունների օրինակարգման, քրիստոնեական իրավակեցության նոր-նոր ձևավորվող գործընթացները: Իրենց կենսունակությունը դրսևորեցին դիցական անցյալի հնօրյա հավատալիքներն ու կենսակերպը: Ուստի, ինչպես վկայված է հունարեն «Վարքում», Տրդատ թագավորը և դեռևս Այրարատում գտնվող Աղբիանոսն ի զորու չեղան անհրաժեշտ պայքար կազմակերպել հեթանոսության դեմ: Տրդատն ստիպված մեկնեց Գրիգորի մոտ և նրան խնդրեց

---

[19] Ագաթանգեղոս, ՃԼ, էջ 438:

[20] Տե՛ս Կանոնագիրք Հայոց, Ա, աշխ. Վ.Հակոբյանի, Ե., 1964, էջ 245 և հտ.: Ենթադրվում է, որ այդ կանոնները Գրիգորին հանձնվել էին Կեսարիայում նրա ձեռնադրվելու ժամանակ (տե՛ս Ն. Ակինեան, Գրիգոր Լուսաւորիչ), Հանդէս ամսօրեայ, 1949, էջ 57: Սակայն նման ենթադրությունը հավաստող որևէ կռվան չկա:

վերադառնալ մայրաքաղաք, մնալ արքունիքում[21]: Սակայն Գրիգորը մերժեց արքային, շարունակելով ճգնակեցիկ կյանքը: Գուցե այս ժամանակ Տրդատ Մեծի և Գրիգորի միջև համաձայնություն է կայացել վերջինիս կրտսեր որդի Արիստակեսին կաթողիկոս կարգելու շուրջը: Աղբիանոսը դեմ չէր նման ընտրության, և ինչպես ցույց տվեցին հետագայի անցքերը, նա սատար կանգնեց Լուսավորչի ժառանգներին[22]: Գրիգորը, ի դեմս որդիների, ջանում էր Հայոց կաթողիկոսությունը դարձնել իր տոհմի ժառանգական մենաշնորհը: Թագավորը դեմ չէր նրա այդ նպատակադրմանը: Նա հասկանում էր, որ Հայոց հայրապետական իշխանությունը հաստատուն հիմքերի վրա գնելու համար այն պետք է ձևավորվեր ժառանգական սկզբունքով, հետևելով թագավորական իշխանությանը: Հենց նրա նախաձեռնությամբ էր, որ Գրիգոր Լուսավորչի որդիները՝ Վրթանեսն ու Արիստակեսը, Կեսարիայից տեղափոխվեցին Հայաստան, և Գրիգորը Տրդատի առաջարկով եպիսկոպոս ձեռնադրեց Արիստակեսին: «Ապա, – գրում է պատմագիրը, – աղաչեաց երանելի թագաւորն Տրդատ զսուրբն Գրիգորիոս, զի փոխանակ այնր, զի ոչ հաւանեցաւ նա կալ և շրջել ընդ նմա և սիրեաց ամենաւորութեան կեանս՝ ձեռնադրեսցէ և տացէ նմա եպիսկոպոս զսուրբ որդին իւր, զոր ետ ածել ինքն՝ զԱրիստակէս»[23]: Բնականաբար, նման պայմաններում Աղբիանոսը չէր կարող հավակնել Հայոց հայրապետության գահաթոռին: Որդուն ձեռնադրելուց հետո Գրիգորը վերադարձավ ու շարունակեց քարոզչությունը, սատար կանգնելով նրան. «Մեծն Գրիգորիոս,– գրում է Ագաթանգեղոսը, – ելանէր զտեղեօքն կարգելովք և զդաւառօքն աշակերտելովք յաշխարհին Հայոց՝ զուարթացուցանել, զօրացուցանել, նորոգել և հաստատել զամենեսեան»[24]:

Արիսաակեսն ու Վրթանեսը Հայաստան ժամանեցին հավանաբար 312թ., երբ լարված էին հայ-հռոմեական հարաբերությունները: Նույն թվականին Հռոմի Մաքսիմիանոս կայսրը պատերազմ էր սանձազերծել Հայաստանի դեմ՝ քրիստոնեությունն այնտեղից արմատախիլ անելու, Հայաստանը կախման մեջ դնելու միտումով, սակայն չարաչար պարտվել էր[25]: Ստեղծված պայմաններում Գրիգորի որդիները հալածանքներից խուսափելու համար հարկ է որ հեռանային Կեսարիայից: Բացի այդ, կայսերական զորքերին հակահարված կազմակերպելու համար անհրաժեշտ էր ամրապնդել հայ եկեղեցու հիմքերը, ժողովրդի մեջ վառել նոր կրոնի գաղափարները: Թերևս, այդ նպատակով էր, որ Գրիգորը ժամանակավորապես թողեց ճգնակեցիկ կյանքը և վերադարձավ Վաղարշապատ:

Արիստակեսը, այդպիսով, 312 թվականից դարձավ կաթողիկոսական տեղապահ: Բայց Աղբիանոսը պահպանեց եպիսկոպոսական կարգը և կարևոր

---

[21] Garitte G., Documents, p. 114.

[22] Ե. Տեր-Մինասյանի կարծիքով, «Աղբիանոսի տունը սկզբից ևեթ միանում է Հայաստանում տարածված ասորիների և ասորական ազդեցության տակ գտնված կուսակցության հետ, որպեսզի իբրև մրցակից ավելի հաջողությամբ կարողանա կռվել հելլենական ազդեցության ներկայացուցիչ Գրիգոր Լուսավորչի տան օրեցօր աճող ազդեցության ու հեղինակության դեմ» (տե՛ս Տեր-Մինասյան Ե., նշվ. աշխ., էջ 40): Բայց այդ դեպքում ինչո՞ւ պետք է Գրիգորը Աղբիանոսին թողներ իրեն տեղապահ՝ նրան վստահելով հայրապետական գործառույթները:

[23] Ագաթանգեղոս, էջ 452-453:

[24] Նույն տեղում, էջ 453:

[25] Եւսեբիոսի Կեսարացւոյ Պատմութիւն եկեղեցւոյ, Վենետիկ, 1877, էջ 688:

գործառնությունները պետական-քաղաքական ոլորտներում՝ թե Արիստակեսի և թե Վրթանեսի կաթողիկոսության ընթացքում, երբ նա կատարում էր հայոց թագավորի և կաթողիկոսի քաղաքական առումով հրատապություն ունեցող հանձնարարությունները: Այսպես, երբ Խոսրով Կոտակ թագավորի օրոք, 330-ական թթ. սկզբներին ամբողջ սրությամբ իրենց զգալ տվեցին միջիշխանական ներհակությունները, ալեկոծելով երկրի ներքաղաքական, նաև եկեղեցական կյանքը, սպառնալով երկրի միասնությանը, Աղբիանոսը սատար կանգնեց Վրթանես կաթողիկոսին և Խոսրով III թագավորին:

Փավստոս Բուզանդը գրում է, որ Վրթանեսն ու Աղբիանոսը ջանում էին կասեցնել հայ նախարարների միջև ծագած գժտությունները, թույլ չտալ, որ դրանք վերածվեն փոխադարձ բնաջնջման և սասանեն թագավորի ու կաթողիկոսի հեղինակությունը: Սակայն նախարարների միջև ընթացող կռիվները ոչ միշտ էր հաջողվում դադարեցնել առանց զինական միջամտության: Այդ կռիվներն առանձնակի ուժով իրենց զգալ տվեցին հարավային Հայաստանի երկու գավառատեր նախարարների՝ Մանավազյանների և Որդունիների միջև ընթացող պայքարում, որը խլեց բազում կյանքեր, զգալիորեն հարվածելով նաև թագավորի ու կաթողիկոսի հեղինակությանը: Կռվազան նախարարներին հաշտեցնելու առաքելությամբ Խոսրով III թագավորի և Վրթանես կաթողիկոսի կողմից Աղբիանոսն ուղարկվեց նրանց մոտ՝ պատերազմի բոցը մարելու ակնկալիքով[27]: Քանի որ Աղբիանոսն առաջնորդում էր Մանազկերտի եկեղեցաթեմը, որը հարևան էր Մանավազյան և Որդունի տոհմերի կալվածներին, ուստի թվում էր, թե նա կկարողանա հաշտության եզրերի հանգեցնել միմյանց դեմ պատերազմող նախարարներին՝ գործադրելով հովվապետի իր հեղինակությունը: Սակայն Աղբիանոսին չհաջողվեց հաշտեցնել նրանց: Ըստ երևույթին, նախարարական այդ տոհմերն ունեին հեթանոսամետ դիրքավորում, կողմնորոշվում էին դեպի Սասանյանները, խրախուսվում նրանց կողմից: Անշուշտ, նրանց միջև ծավալված պայքարը կազմալուծում էր հայոց ռազմուժը, հեղինակազրկում հայոց թագավորին: Այն «ինքնին արդեն մի ապացույց է Խոսրով III-ի հեղինակության և թագավորական իշխանության թուլության», - գրում է ակադեմիկոս Հ.Մանանդյանը[28]: Աղբիանոսը ջանում էր հաշտեցնել նախարարներին և իր տոհմը փրկել անխուսափելի կործանումից: Սակայն միմյանց դեմ արյունահեղ կռիվներ մղող Մանավազյան և Որդունի տոհմերի նախարարները քամահրեցին թե՛ նրան և թե՛ թագավորին ու կաթողիկոսին (որոնց անունից էր Աղբիանոսը փորձում հաշտեցնել նրանց): Նախարարներն անարգական վերաբերմունք ցուցաբերեցին նրա հանդեպ՝ պարսավանքով ու «մեծաւ թշնամանօք» վտարելով իրենց տիրույթներից: Արյունահեղ բախումները հանգեցրին այն բանին, որ սպարապետ Վաչե Մամիկոնյանը բնաջնջեց այդ տոհմերը:

Այս հաղթանակից հետո Խոսրով III-ը «ետ զաւանն և զբուն դահոյից գեւղն նահապետին Մանավազէնից եպիսկոպոսին Աղբիանոսի յեկեղեցի. ոՄանաւազակերտ ամենայն սահմանօքն և գաւառակաւն հանդերձ՝ որ շուրջ զնոքօք էր, որ կայ ի կողմանս գետոյն Եփրատայ»[29]: Այս վկայությունից երևում է, որ Մանազկերտի եկեղեցաթեմի առաջնորդ Աղբիանոսն այս ժամանակ ի

---

[26] Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց (այսուհետև՝ Փավստոս Բուզանդ), ի լոյս ած. Ք.Պատկանեան, Ս.Պետերբուրգ, 1883, էջ 9:

[27] Մանանդեան Հ., Երկեր, Բ, Ե., 1978, էջ 145:

[28] Փավստոս Բուզանդ, էջ 9:

տիրություն է ստացել այդ քաղաքը և հարակից գավառը՝ ի տրիտուր իր օրինապահ դիրքավորման: Հավանաբար, նկատի է առնվել նաև Մանավազյան տոհմից նրա ծագումը:

337թ. Սասանյան Շապուհ II արքայի հրահրմամբ Խոսրով III Կոտակի դեմ ապստամբեցին Աղձնյաց բդեշխը և Բզնունիք գավառի նախարարը, որոնց օժանդակում էր հարավային Հայաստան ներխուժած պարսից զորքը: Սակայն հայոց բանակը ջախջախեց խռովարար հայ իշխաններին և նրանց զորակցող պարսից բանակին[29]:

Նախարարական երկպառակություններին վերջ տալուն նպատակուղղված՝ Աղբիանոսի հաշտարար առաքելությունը հետևանք էր, անշուշտ, նրա բարձր հեղինակության և ազդեցության: Աղբիանոսը չարունակեց սատարել Հայաստանի հայրենասեր ուժերին՝ հանդես գալով նրանց անունից մի այնպիսի ժամանակ, երբ Սասանյան մոլեկրոն արքա Շապուհ II-ը մեծապես խրախուսում էր հայոց անջատամետ ուժերին և հենվելով նրանց վրա, ջանում էր փոխել Հայաստանի քաղաքական կողմնորոշումը, որոշ հայ նախարարների աջակցությամբ այնտեղ վերականգնել հեթանոսական պաշտամունքը՝ զրադաշտականության ձևով, Հայաստանը վերածելով Պարսկաստանի մարզերից մեկի: Ընդհանրապես, Շապուհ II-ի օրոք քրիստոնեությունը դիտվում էր որպես պետության թշնամի ուժ[30] և, բնականաբար, ըստ ամենայնի պայքար էր ծավալվում նրա դեմ: Շապուհն անլուր հալածանքներ սկսեց այդ կրոնի հետևորդների դեմ և հրաման արձակեց անխնա կոտորել նրանց[31]:

Հայրենասեր ուժերին սատար կանգնելու հանգամանքը երկրում մեծացրեց Աղբիանոսի տոհմի վարկը: Հայոց թագավորի հանդեպ ցուցաբերած նվիրվածությունն այս տոհմի ներկայացուցիչների առջև բացեց նոր հորիզոններ՝ ուղի հարթելով դեպի հայրապետական գահը: Հետզհետե նրանք դարձան այդ գահի հավակնորդներ՝ մրցակցելով Գրիգոր Լուսավորչի տոհմի հետ: Հենց որ վերջինիս ներկայացուցիչները Հայոց Արշակունի թագավորների համար դառնում էին անհանդուրժելի, կաթողիկոսական գահաթոռին առաջ էին քաշվում Աղբիանոսյանները: Հայտնի է, որ Տիրան թագավորը (338 – 345) սպանել տվեց Լուսավորչի տոհմից սերած Հուսիկ կաթողիկոսին և նրան հաջորդած, ազգով ասորի Դանիելին, որից հետո նա գերադասեց կաթողիկոսական գահին բազմեցնել Աղբիանոսի տոհմից Փառենին (Փառներսեհ), որը թեև ուներ սոսկ երիցության կարգ, բայց թագավորի կամքով միանգամից նշանակվեց հայոց հայրապետի պաշտոնում: «Ցայնմ ժամանակի, – գրում է Փավստոս պատմագիրը, – համարեցան արժանի զՓառէն ոմն էրէց, ի գաւառէն Տարօնոյ, ի մեծէ մարգարէանոցէն Յովաննու, որ էր նախ չինեալ տուն աղօթից և խնդրուածոց ի հանգիստ սրբոցն, զի այն նմա էր հաւատացեալ»[32]: Մովսես Խորենացին Փառենին գիտե իբրև «Փառնէրսեհ ոմն յԱշտիշատից Տարօնոյ»[33]: Ինչպես հայտնի է, Աշտիշատը Լուսավորչի տան սեփականությունն էր: Հավանաբար, այդ հռչակավոր ավանի հետ Փառենի առնչվելու փաստն է Մ.Օրմանյանին հիմք տվել ենթադրելու, որ

[29] Մովսես Խորենացի, էջ 263-264, Փավստոս Բուզանդ, III, Ը, էջ 18:

[30] The Cambridge History of Iran, vol. 3 (1). Cambridge., 1983, p. 485.

[31] Տե՛ս Ասորական աղբյուրներ, Ա, թարգմ., առաջաբան և ծան. Հ. Մելքոնյանի, Ե., 1976, էջ 97:

[32] Փավստոս Բուզանդ, էջ 32:

[33] Մովսես Խորենացի, էջ 275:

նա ազգակցություն է ունեցել Լուսավորչի տոհմի հետ[34]: Հնարավոր է, որ Փառենը Աշտիշատում վարում էր երեցի պաշտոնը՝ շնորհիվ Աղբիանոսյան տոհմի ձեռք բերած ազդեցության: Բայց այդ դիրքին նա կարող էր հասնել Լուսավորչի տան հավանությամբ, ինչը միանգամայն հնարավոր էր վերջինիս հանդեպ Աղբիանոսի ցուցաբերած նվիրվածության պարագայում: Իհարկե, Աղբիանոսյանները նախկինի պես պահպանում էին իրենց հողատիրույթները և Մանազկերտի եպիսկոպոսական աթոռը, որը մեծ դեր ուներ Հայաստանի եկեղեցական համակարգում[35]: Սակայն Տիրան թագավորը գերադասեց կաթողիկոս դարձնել ոչ թե Մանազկերտի առաջնորդ Աղբիանոսյանին (որը պետք է ունենար եպիսկոպոսական պաշտոն), այլ նույն տնից սերած Աշտիշատի երեցին: Գուցե այդպիսով թագավորը կամենում էր կաթողիկոսի գահին տեսնել առավել հնազանդ և օրինակատար հոգևորականի:

Մովսես Խորենացին գրում է, որ Փառենը (Փառներսեհը) Հայոց կաթողիկոսի գահին բազմեց «ի տասներորդ ամի Տիրանայ. որ կալաւ զաթոռն ամս չորս»[36]: Ըստ այդմ նա պետք է գահակալած լինի 348 – 352 թվականներին: Փավստոս Բուզանդը գրում է, որ Տիրանը Փառենին մի քանի ականավոր նախարարների հետ ուղարկել է Կեսարիա՝ ձեռնադրվելու: Այդ նախարարներից հիշվում են սպարապետ Վասակ Մամիկոնյանը, Մեհենդակ Ռշտունին, Անդովկ Սյունին, Արշավիր Կամսարականը «և տասն այր այլ արք պատուականք»[37]: Մովսես Խորենացին Փառենի Կեսարիա մեկնելը չի հիշատակում՝ թերևս, լռելյայն համաձայնվելով Փավստոսի հետ: Խորենացու լռությունն է, հավանաբար, հիմք դարձել Կեսարիայում Փառենի ձեռնադրության փաստը ժխտելու համար[38]: Սակայն Կեսարիա Փառենի մեկնելը հավաստի է: Այն հասկանալի է դառնում տվյալ պահին հայ-հռոմեական մերձեցման հետնախորքի վրա: Հայտնի է, որ Տիրանը Կեսարիա ձեռնադրվելու ուղարկեց նաև Հուսիկ կաթողիկոսին, ինչն ինքնին անուղղակի ապացույց է Տիրանի հռոմեամետ դիրքորոշման[39]: Տիրանը ջանում էր ամրապնդել հայ-հռոմեական ռազմաքաղաքական մերձակցությունը նաև հոգևոր-եկեղեցական հաղորդակցությամբ: Ուստի, Հուսիկի, ապա նաև Փառենի Կեսարիա այցելելն ուներ նաև քաղաքական սուր հնչեղություն: Իհարկե, դա չէր նշանակում, թե Հայոց եկեղեցին ենթակա է Կեսարիային: Հայաստանն անկախ երկիր էր, նույնն էր նաև նրա եկեղեցին: Փավստոս Բուզանդը վկայում է Տիրան թագավորի հանդեպ Փառենի հլու հնազանդ վարքագծի մասին՝ շեշտելով,

---

[34] Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 155:

[35] Markwart J., Die Entstehung der armenischen Bistümer, Roma, 1932, S. 168.

Ե.Տեր-Մինասյանը կարծում է, որ Փառենը հարավ-արևմտյան Հայաստանում իշխող ասորական ազդեցության նշանավոր ներկայացուցիչներից մեկն էր, ուստի կարողացավ հասնել կաթողիկոսական իշխանության (տե՛ս Ե. Տեր-Մինասյան, նշվ. աշխ., էջ 42-43): Բայց Աշտիշատը ասորական ազդեցությանը ենթակա չէր: Տիրանը ասորի Դանիել կաթողիկոսին սպանել տալուց հետո, բնականաբար, նոր կաթողիկոս էր կարգելու՝ ի հակակշիռ ասորի հոգևորականության: Բացի այդ, Աղբիանոսյան տոհմի հոգևորականներն ասորական ազդեցության կրողները չէին: Նրանց հոգևոր հավատամքը ուներ զուտ ազգային ուղղվածություն, որով և պայմանավորված էր նրանց հավատարմությունը թագավորի, հայրենասեր ուժերի նկատմամբ:

[36] Մովսես Խորենացի, էջ 275:

[37] Փավստոս Բուզանդ, էջ 38:

[38] Տե՛ս Մ. Օրմանեանի մոտ (Ազգապատում, Ա, էջ 156):

[39] Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 157:

որ նա «ի հարկէ ընդերէր անօրէն թագաւորին, և ըստ նորին կամացն երթեալ հնազանդեալ»[40]: Մատենագիրների վկայությունները թույլ են տալիս կարծելու, որ Տիրան թագավորի հանդեպ Փառեն կաթողիկոսի դիրքավորումը մնացել է անփոփոխ նաև հետագայում, երբ Շապուհ II թագավորի դավերի հետևանքով Հայաստանը հայտնվեց ծանր կացության մեջ: Երկրի հայրենասեր ուժերը համախմբվեցին հայոց թագավորի և նրան սատարող եկեղեցու շուրջը՝ անդիջում պայքար մղելով ոսոխի ու նրան զորակցող հեթանոսամետ հայ նախարարների դեմ: Անշուշտ, այս իրողությունն ի նկատի առնելով, պատմագիրները Փառենին ներկայացնում են միայն դրական գծերով, մինչդեռ, նրա զեղծարարո որդի Հովհանին Փավստոսը պատկերել է որպես բարոյական արգելակներից զուրկ, ընչաքաղց ու մեղսական հակումներով առլեցուն հոգևորական[41]:

Տիրան թագավորի կամքով Փառենից հետո ևս Հայոց կաթողիկոսի գահին բազմեց Աղբիանոսյան տան ներկայացուցիչը՝ ոմն Շահակ[42]: Տիրանը դնահատում էր այդ տոհմի օրինապատշաճ վարքագիծը: Նա նկատի էր առնում նաև այն փաստը, որ Աղբիանոսյանները բացի ազգային շահագրգռություններից, ուրիշ միտումներ չունեին և սատարում էին երկրում միածիր ու ներդաշնակ քաղաքականության արմատավորմանը՝ բնավ առավելություն չտալով զորեղ հարևաններից որևէ մեկին: Այդ է պատճառը, որ արտաքին քաղաքական հարաբերությունների բեմահարթակում նրանք գրեթե չեն երևում: Ի դեպ՝ նշելի է Փավստոս պատմիչի վկայությունը Շահակի ընտրության մասին: Վերջինիս կաթողիկոս ընտրելուց հետո «տան զնա ի ձեռս իշխանին մարդպետութեանն, որում անուն իւր Հայը կոչէր. և յաւագաց գումարէն ընդ նմա զիշխանն Գարդմանաց ձորոյն և առէն ընդ նոսա այլ տան նախարարս և յուղարկեցին զնա մեծաշուք պատուով յերկիրն Գամրաց ի մեծ քաղաքն Կեսարիա: Անդ ձեռնադրեն զՇահակն ի կաթողիկոսութիւն Հայոց Մեծաց»[43]:

Այս վկայությունից երևում է, որ Շահակի ձեռնադրության պարագայում առաջատար դեր էր վերապահված Հայր մարդպետին, որը, ինչպես հայտնի է, հետամուտ էր կենտրոնամետ քաղաքականության: Նա նաև ամեն կերպ ջանում էր՝ի դերև հանել Լուսավորչի տան ազդեցությունը: Հասկանալի է, որ մարդպետը սատարում էր Աղբիանոսյաններին՝ ի հեճուկս Լուսավորչի տան: Այդ հանգամանքը, բնականաբար, որոշակի դեր խաղաց Աղբիանոսի ժառանգների առաջքաշման գործում: Այն, միաժամանակ, հակադրության եզրեր ստեղծեց Շահակ կաթողիկոսի և հեթանոսաբարո նախարարների միջև: Շահակը, – գրում է պատմագիրը, – «Նմանեաց վարուցն Փառենայ: Առաջնորդէր սա աշխարհի ըստ նմին օրինակի: Բայց որոց հովուէրն՝ չեղեալք ունկն ինչ խրատու ճշմարտութեանն, այլ յանդիմանեալք՝ հոլանեալ գործէին զմեղս համարձակութեամբ՝ առանց խիթի յամենայն չարիս դարձեալք...»: Ժողովրդի մի ստվար մասը շարունակում էր հետևել վաղօրյա բարքերին՝ «առաջին գործոցն հարցն իւրեանց»[44]:

---

[40] Փավստոս Բուզանդ, էջ 38:

[41] Տե՛ս նույն տեղում, էջ 225 – 227:

[42] Նույն տեղում, III, ԺԷ, էջ 39: Մովսես Խորենացին Փառենից (Փառներսեհից) հետո չի դնում Շահակին, որին կաթողիկոս է հիշում Ներսես Մեծից հետո՝ Սահակ անունով (տե՛ս Մովսես Խորենացի, էջ 306):

[43] Փավստոս Բուզանդ, էջ 39:

[44] Նույն տեղում:

Փավստոս Բուզանդի այս հաղորդումից պարզ է դառնում, որ Շահակի հեղինակությունը խիստ սասանվել էր, ինչը գցում էր նաև նրա տոհմի վարկը, գիմաղրկում Հայոց եկեղեցին, որն այլևս նախկինի պես չէր կարող հենարան ծառայել երկրի միասնությանը: Անհրաժեշտ էր ոգեկոչել Լուսավորչի տոհմի փառապանծ ավանդներն ու կորովը: Արշակ II թագավորը հասու եղավ այդ ճշմարտությանը և որոշեց կաթողիկոսի գահին բազմեցնել Լուսավորչի տնից սերած Ներսեսին (353 - 373), որի օրոք եկեղեցին վերստացավ իր վարկն ու ազդեցությունը: Սակայն 359թ. Արշակ II-ի և Ներսես կաթողիկոսի հարաբերությունները վատթարացան այն աստիճան, որ Արշակը Հայաստանի բոլոր եպիսկոպոսներին հրամայեց ժամանել Վաղարշապատ մայրաքաղաք՝ նոր կաթողիկոս ընտրելու համար: Վերջինիս թեկնածության համար թագավորն առաջադրել էր Զոնակին: Սակայն, - գրում է Փավստոս Բուզանդը, - թագավորի հրամանին անսացին քչերը: «Եւ ոչ մի ոք ոչ հաւանեաց դալ, բայց միայն Աղձնեաց և Կորդուաց եպիսկոպոսք եկին, և զՁոնակն ձեռնադրեցին կաթողիկոսութիւն ըստ հրամանի թագաւորին»[45]: Պատմագիրը Զոնակին բնորոշում է որպես «ստրուկ ի ստրկաց արքունի», կամենալով, թերևս, շեշտել թագավորի հանդեպ նրա ծառայական ու տիրասեր բնավորությունը: Զոնակը, հավանաբար, ծաղրական մականուն էր[46], և այն կրողը նույն Շահակ Աղբիանոսյանն էր[47]: Անընդունելի է այն տեսակետը, որ իբր հայ եպիսկոպոսները հրաժարվել են Զոնակին ձեռնադրել, քանի որ չեն կամեցել խախտել Կեսարիայի հայրապետական աթոռի նկատմամբ իրենց ունեցած հավատարմությունը[48]: Տվյալ պահին արծարծվում էր ոչ թե Կեսարիայի մետրոպոլիտության հետ հայ եպիսկոպոսների ունեցած առնչությունների խնդիրը, այլ բոլորի մտքերը հուզող Ներսես կաթողիկոսի չնորհազրկման, եկեղեցու հանդեպ թագավորի կոչտ դիրքավորման հարցը, որը հարուցել էր հոգևոր վերնախավի ընդդիմությունը:

Ընդհանուր դժգոհության ալիքի վրա տարուբերվող Շահակը Ներսեսի կենդանության ժամանակ մնաց ստվերում. համակերպվող էր և զուսպ: «Էր Զոնակն այր զգօն, և ոչ ինչ ունէր լեզու յանդիմանութեան կամ խրատու, այլ հաւանեալ էր թագաւորին զինչ և նա գործիցէ», - գրում է Փավստոսը[49]: Սակայն վերահաս իրադարձությունները Արշակ թագավորին հարկադրեցին վերանայել իր քաղաքականությունը Հայոց եկեղեցու հանդեպ: Շապուհ II-ի աշխարհավեր արշավանքների ժամանակ վերստին եկեղեցու գլուխ կանգնեց Ներսես Մեծը՝ սատար կանգնելով հայոց եղերաբախտ արքային, հայրենասեր ուժերին: Քանի որ Շահակը (Զոնակը) օրինապահ էր թագավորի հանդեպ, ուստի բացառվում էին Ներսեսի և նրա միջև սուր հակասությունները և, հնարավոր է, որ ահեղաշունչ այդ տարիներին նրանք համադաշն ջանքերով պաշտպանում էին Արշակ II-ին և նրա շուրջը համախմբված նախարարներին: Շահակի դիրքավորումը կարող էր նպաստել Ներսես Մեծից հետո կաթողիկոսական գահաթոռին Աղբիանոսյանի առաջքաշմանը: Հարկավ, Ներսեսի մահվանից հետո՝ 373թ. հայոց կաթողիկոս է հիշվում Հուսիկ Աղբիանոսյանը: Վերջինիս ընտրության գործում կարող էր

[45] Փավստոս Բուզանդ, էջ 105:

[46] Markwart J., Die Entstehung der armenischen Bistümer, S. 222.

[47] Տե՛ս Օրմանեան Մ., նշվ. աշխ., էջ 187:

[48] Տե՛ս Հացունի Վ., Կարևոր խնդիրներ Հայ եկեղեցւոյ պատմութենէն, Վենետիկ, 1927, էջ 197:

[49] Փավստոս Բուզանդ, էջ 105:

որոշակի դեր խաղալ նաև այն հանգամանքը, որ Հուսիկ եպիսկոպոսը եղել էր Ներսես Մեծի տեղապահը և Պապ թագավորի կամքով կարգվելով կաթողիկոս, հավատարիմ մնաց իր նախորդի պատվիրաններին, իրեն դրսևորեց որպես օրինապահ առաջնորդ՝ «այր գովելի և լի առաքինութեամբ և բարեկարգութեամբ կրօնի»[50]: Փավստոս Բուզանդը, որ թունոտ վերաբերմունք ունի Պապ թագավորի նկատմամբ, նշում է, որ նա Ներսեսի մահվանից հետո կաթողիկոս նշանակեց Հուսիկ եպիսկոպոսին, «որ էր ի զաւակէ Ազբիանոս եպիսկոպոսին Մանազկերտոյ: Եւ հրաման ունել նմա զտեղի հայրապետացն, իշխել փոխանակ նորա՝ զոր սպան»[51]:

Մովսես Խորենացին Ներսես Մեծի հաջորդ է հիշում Աղբիանոսի ժառանգներից Սահակին՝ նրան բնութագրելով դրական գծերով: Պատմիչը նաև չեշտում է առանց Կեսարիայի հայրապետի մոտ ուղարկելու նրան հայոց կաթողիկոս նշանակելու հանգամանքը[52]: Հավանաբար, Հուսիկ անունը Իսահակ անվան աղավաղված ձևն է[53]: Ըստ այդմ, Սահակ ասելով՝ Խորենացին հարկ է որ նկատի ունենար Հուսիկին: Գուցե, Սահակ անունը Հուսիկ կաթողիկոսի աշխարհական անունն էր: Մ.Օրմանյանը Ներսեսի հաջորդ է գնում Շահակին՝ այդ անունը համարելով «Սահակ»-ի ասորական այլաձևությունը[54], որը, սակայն, չի վկայված աղբյուրներում[55]:

Հուսիկը նախանձախնդիր էր Պապ թագավորի վարած քաղաքականության, համակերպվող էր, դյուրաթեք ու օրինապահ: Հուսիկը, – հավաստում է Փավստոս պատմագիրը, – «ըստ կամաց թագաւորին միայն ունէր զպատիւն, և կայր ի լռութեան և ի հանդարտութեան զամենայն աւուրս կենաց իւրոց»[56]: Նրա օրոք Պապն անկաշկանդ իրականացրեց իր եկեղեցական բարեփոխումները՝ տնտեսապես թուլացնելով և պետությանը ստորադասելով եկեղեցին:

Պապը Հուսիկին թույլ չտվեց ձեռնադրվելու համար մեկնել Կեսարիա, ինչը բացասաբար ընդունվեց վերջինիս մետրոպոլիտի կողմից, որը փութապես հրավիրեց իրեն ենթակա եպիսկոպոսների ժողով և Հուսիկին կարգաթող անել տվեց՝ զրկելով թե կաթողիկոսի և թե եպիսկոպոսներ ձեռնադրելու իրավունքներից: «Յայնմ հետէ, – գրում է պատմագիրը, – բարձաւ իշխանութիւն յերկրէն Հայոց, այնուհետև ոչ իշխէին եպիսկոպոսք ձեռնադրել»: Նույն այդ ժողովի վճռով Հուսիկը լոկ պետք է ունենար Հայոց թագավորի սեղանի հացը օրհնելու իրավունք, իսկ Հայաստանի հոգևոր այրերը եպիսկոպոսական կարգ ստանալու համար պետք է ձեռնադրվեին Կեսարիայում[57]:

Սակայն ժողովի վճիռները կանոնական ուժ չունեցան Հայոց եկեղեցու համար և չկարողացան կարգալույծ անել Հուսիկին: Փաստորեն, Կեսարիայի աթոռն ի զորու չեղավ բեկանել Հայոց թագավորի հանած վճիռը: Հուսիկը Հայոց հայրապետի պաշտոնը թողեց Պապի կամքով: Այդ փաստը Հայոց եկեղեցու վրա

---

[50] Տե՛ս Սոփերք Հայկականք, Է, Վենետիկ, 1853, էջ 27:

[51] Փավստոս Բուզանդ, էջ 190:

[52] Մովսես Խորենացի, էջ 190:

[53] Մանանդյան Հ., նշվ. աշխ., էջ 217, ծ. 2:

[54] Օրմանեան Մ., Ազգապատում, Ա, էջ 223 - 224:

[55] Հմմտ. Աճառյան Հ., Հայոց անձնանունների բառարան, Դ, Ե., 1948, էջ 103, 348:

[56] Փավստոս Բուզանդ, V, ԻԹ, էջ 190 - 191:

[57] Նույն տեղում:

Կեսարիայի մետրոպոլիտության կանոնական իրավունքները չտարածվելու ցայտուն վկայությունն է: Պապը Հուսիկի փոխարեն կաթողիկոս կարգեց մեկ այլ հոգևորականի՝ Փավստոս անունով, իհարկե, ի հակակշիռ Կեսարիայի աթոռի: Պապը ձեռնադրվելու համար Փավստոսին ուղարկեց Կապադովկիայի մյուս հովվապետի՝ Անթիմոս մետրոպոլիտի մոտ, որի հարաբերությունները Կեսարիայի աթոռի հետ հույժ լարված էին: Անթիմոսը սիրահոժար Հայոց կաթողիկոս ձեռնադրեց Փավստոսին, որի հայրապետությունը կարճատև եղավ, քանի որ Պապի սպանվելուց հետո Հայաստանի հոգևորականության կամքով Հայոց կաթողիկոս դարձավ Կյուրեղը՝ ձեռնադրվելով Կեսարիայի Բարսեղ մետրոպոլիտի կողմից[58]: Այդպիսով, վերականգնվեցին Կեսարիայի աթոռի և Հայ առաքելական եկեղեցու միջև եղած ծիսադավանական առնչությունները:

Մոտավորապես 377թ. Հայոց կաթողիկոսի գահին վերստին տեսնում ենք Աղբիանոսյանի՝ Զավեն անունով (377-380): «Էր Զաւէնս այս անուանի զաւակ Աղբիանոս եպիսկոպոսի՝ ի գեղջէ Մանաւազակերտոյ», - գրում է Փավստոս պատմիչը՝ ավելացնելով նաև, որ «էր սա բարոյիւք այր չարարար խիստ», քանզի նա բոլոր քահանաներին սովորեցրեց կրել մինչև ծնկները հասնող զինվորական զգեստներ և մեծագին մուշտակներ՝ դրանք զարդարելով «պէսպէս նարօտօք»: Պատմագրի հավաստմամբ, «սիգային որպէս ոչ վայել էր. և զմորթ մեռելոտիս գազանացն քահանայքն անխտիր ագանէին»[59]: Ենթադրվում է, որ Զավենի կատարածը բնավ նորաձևություն չէր, այլ հեթանոսական Հայաստանի քրմության ազգային այն տարազի վերականգնումը, որը կրում էին նաև Հայոց առաջին հայրապետները մինչև Ներսես Մեծը[60]: Բայց Փավստոսը գրում է, որ Զավենի օրոք հայ քահանաները այլևս չէին հագնում այնպիսի զգեստներ, «որպէս օրէն էր ի բնէ»[61], հրաժարվելով Հայ եկեղեցու հայրերի կրած համազգեստից: Ուրեմն, ի սկզբանե հայ եկեղեցականները կրել են այլ տեսակ զգեստներ, որոնք մերժվել են Զավենի կամքով[62]: Գուցե Զավենը, հոգևորականությանը աշխարհիկ զգեստներ պարտադրելով, կամեցել է արտաքին տեսքով տարբերել նրանց օտար եկեղեցիների սպասավորներից՝ հանդերձները օժտելով ազգային վաղեմի հատկանիշներով:

Զավենից հետո Հայոց կաթողիկոսի պաշտոնում հիշվում է ևս մեկ Աղբիանոսյան՝ Ասպուրակեսը (381 - 385), որը Փավստոս Բուզանդի հավաստմամբ, Հայոց թագավոր Խոսրով IV Արշակունու օրոք առաջնորդում էր Հայոց եկեղեցին՝ պահպանելով Զավենի ներմուծած եկեղեցական համազգեստը: Ըստ երևույթին, Հայոց թագավորը և սպարապետը դեմ չէին դրան: Պատմագիրը Ասպուրակեսին հիշում է իբրև «քրիստոնէամիտ, աստուածապաշտ, արդար» այր[63]:

Ասպուրակեսի օրոք Կոստանդնուպոլսում 381թ. կայացավ քրիստոնեական եկեղեցիների երկրորդ տիեզերաժողովը, որին հայ եկեղեցին պատվիրակներ

---

[58] Գելցեր Հ., Փաւստոս Բիւզանդ կամ Հայկական եկեղեցւոյ սկզբնաւորութիւն, Վենետիկ, 1896, էջ 132 - 133:

[59] Փավստոս Բուզանդ, էջ 223:

[60] Տե՛ս Գելցեր Հ., նշվ. աշխ., էջ 97: Հեղինակի կարծիքով, քանի որ Գրիգոր Լուսավորչի նախնիք Արշակունի տան «կողմնակի» ճյուղն էին, ուստի եղել էին Մեծ Հայքի քրմապետներ (նույն տեղում, էջ 103 - 104): Սակայն այս կարծիքը չի ապացուցվում:

[61] Փավստոս Բուզանդ, էջ 223:

[62] Հմմտ. Տէր-Մինասեան Ե., նշվ. աշխ., էջ 46 - 47:

[63] Փավստոս Բուզանդ, էջ 224:

չուղարկեց: 379 թվականից Թեոդորոս I կայսրը քրիստոնեությունը հռչակեց Արևելյան Հռոմեական կայսրության պաշտոնական դավանանք, որից հետո Արևելքի (հատկապես Պարսկաստանի) քրիստոնյաները Սասանյանների կողմից անհիմն մեղադրվեցին իրենց ախոյան կայսրության հետ գաղտնի, դավադիր կապեր ունենալու մեջ[64]: Ստեղծված պայմաններում, հավանաբար, Ասպուրակեսը գերադասեց ձեռնապահ մնալ տիեզերաժողովին մասնակցելուց, որպեսզի չհարուցի հզոր հարևանի կասկածներն ու թշնամանքը: Սակայն նա չխզեց ծիսադավանական հաղորդակցությունը Արևմուտքի եկեղեցիների հետ, ընդունեց տիեզերաժողովի հաստատած դավանական կանոնները:

Ենթադրվում է, որ 428թ. Սահակ Պարթևի գահընկեցությունից հետո Պարսից Վռամ V արքայի կամքով հայոց կաթողիկոս նշանակված Սուրմակ երեցը Աղբիանոսյան էր[65]: Բայց Սուրմակին հիշող Մովսես Խորենացին և Ղազար Փարպեցին բնավ չեն նշում, որ նա Աղբիանոսի տոհմից էր: Ղազար Փարպեցին նրան համարում է «ի գաւառէն Բզնունեաց ի գեղջէն որ կոչի Արծկէ, ի տոհմէ քահանայից գաւառին»[66]: Բայց դժվար է ասել, թե պատմագիրն իրոք նկատի ունի Աղբիանոսյանի: Սովորաբար պատմագիրները Աղբիանոսյանների տոհմական ոստան են համարում Մանազկերտը՝ հարակից գավառով, անպայման չեշտելով տոհմի բնակավայրի, նրա նախնու անունը, ինչը չենք տեսնում Սուրմակի պարագայում: Ուստի դժվար է համաձայնվել նրան Աղբիանոսյան համարելու ենթադրության հետ:

450 - 451թթ. ժողովրդաազատագրական պատերազմի ժամանակ Աղբիանոսյանները չեզոք դիրք գրավեցին: Նրանցից Մեղետը (Մելիտեն), որ հետո նստեց Հայոց կաթողիկոսի գահին, մասնակցեց 449թ. Արտաշատի ժողովին: Եղիշեն ժողովական 18 եպիսկոպոսների մեջ երրորդ տեղում (Հովսես կաթողիկոսից և Տարոնի Սահակ եպիսկոպոսից հետո) հիշում է «Մեղէտ եպիսկոպոս Մանազկերտոյ», որը Փարպեցու մոտ հինգերորդ տեղում է)[67]: Հավանաբար, այս տոհմից սերած հոգևորականության չեզոք վարքագծի պատճառով էր, որ Սասանյան արքունիքը համաձայնվեց, որպեսզի ազատագրական շարժման առաջնորդներից մեկի՝ Հովսեփ կաթողիկոսի մահապատժից հետո նրա գահը ժառանգեն Աղբիանոսյաններ Մելիտեն և Մովսեսը: «Յետ կատարման սրբոյ կաթողիկոսին Յովսեփայ յաջորդեաց զկաթողիկոսութիւնն յաշխարհիս Հայոց տէր Մելիտէ, որ էր յազգէն Մանազկերտեցեացն. և զհետ նորա տէր Մովսես, որ էր և նա ի նոյն ազգէ»[68], - գրում է Ղազար Փարպեցին:

Մարզպանության ժամանակաշրջանում նույնպես Աղբիանոսյանները նախկինի պես խորշում էին ծայրահեղ միջոցներից: Նրանք որդեգրեցին զգուշավոր

---

[64] The Cambridge History of Iran, vol. 3(1), p. 499.

[65] Տե՛ս Օրմանեան Մ., Ազգապատում, Ա, էջ 304, Հայ ժողովրդի պատմություն (բազմահատորյակ), հ. II, Ե., 1984, էջ 167 - 168:

[66] Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց, Թուղթ առ Վահան Մամիկոնեան, աշխ. Գ. Տէր-Մկրտչեանի և Ստ. Մալխասեանցի, Տփղիս, 1904, I, ԺԴ, էջ 23:

[67] Տե՛ս Եղիշէի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմին, աշխ., Ե. Տեր-Մինասյան, Ե., 1957, էջ 27, Ղազար Փարպեցի, էջ 44:

ուղին և, հեռու մնալով քաղաքական վայրիվերումներից, պահպանեցին չեզոք վարքագիծը: Ենթադրվում է, որ Վասակ Սյունեցու կողմնակից հոգևորականները ասորամետ հոսանքի ներկայացուցիչներ էին, որոնք 450 - 451թթ. ժողովրդական պատերազմից հետո հենարան դարձան Մելիտե և Մովսես Աղբիանոսյաններին[69]: Դժվար է, անշուշտ, նման տեսակետի հետ համաձայնվելը: Նախ, հնարավոր չէ հիմնավորել հեղինակի այն կարծիքը, թե իբր Վասակ Սյունեցու կողմնակից քահանաները պատկանում էին ասորական հոսանքին: Բացի այդ, ժողովրդական պատերազմի ընթացքում Հայոց եկեղեցու սպասավորները պայքարի հորձանուտների մեջ նետվեցին ոչ թե այն պատճառով, որ պատկանում էին ասորականին ներհակող հունասեր հոսանքին, այլ որովհետև հետամուտ էին ազգային-կրոնական և հայրենասիրական շահախնդրությունների: Նշելի է նաև այն փաստը, որ Վասակ Սյունեցու կամակատար հոգևորականները, ինչպես հավաստում է Ղազար Փարպեցին, սյունեցի էին և այն էլ ընդամենը 2 - 3 հոգի, որոնք Վասակի թելադրանքով բնակչության մեջ տարփողում էին Հազկերտ արքայի կողմից քրիստոնեական հավատն ազատ դավանելու մասին հայերին ուղղված ներման հրովարտակը[70]: Եղիշեն վկայում է, որ ազատագրական պատերազմից հետո Հայաստանի մարզպան նշանակված Ատրորմիզդ Արշականը (Արշակունին) Հայաստանում ստեղծված կացությանը ծանոթանալու համար իր մոտ հրավիրեց ազատագրական պատերազմին մասնակցած ականավոր հոգևորականների և նրանցից ստանալով իրեն հետաքրքրող տեղեկությունները Հայաստանի կացության մասին՝ դրանք հաղորդեց Հազկերտ արքային[71]: Ատրորմիզդը հասկանում էր, որ ազատագրական պատերազմից հետո հայ եկեղեցականների ընդվզուն ներկայացուցիչները պահպանում են իրենց բարձր հեղինակությունը ժողովրդի ամենալայն խավերում: Եղերամահ Հովսեփ հայրապետի, Ղևոնդ երեցի և նրանց կուսակիցների հետևորդներն էին տոն տալիս Հայաստանի հոգևոր-եկեղեցական կյանքին: Բնականաբար, Աղբիանոսյան տնից սերած կաթողիկոսները պետք է հենվեին ժողովրդի հարգանքը վայելող հոգևորականների և ոչ թե մի քանի ուխտազանցների վրա: 450 - 451թթ. ազատագրական պատերազմից հետո Աղբիանոսյանները չարունակեցին իրենց զգուշավոր և իշխանությունների հանդեպ օրինապահ ուղեգիծը: 481թ. բռնկված ազատագրական պատերազմում նրանք չեն հիշվում: Այնուհետև, Աղբիանոսյանները ընդմիշտ վերանում են Հայաստանի եկեղեցական կյանքի հորիզոնից[72]:

---

[68] Ղ ա զ ա ր Փ ա ր պ ե ց ի, էջ 110:

[69] Տ ե ս Գ յ ո ւ զ ա լ ե ա ն Գ., Հինգերորդ դարի Հայոց կրոնական և քաղաքական շարժումները, Բեյրութ, 1947, էջ 138:

[70] Ղ ա զ ա ր Փ ա ր պ ե ց ի, էջ 68:

[71] Ե ղ ի շ ե, էջ 129 - 130:

[72] Մ. Օ ր մ ա ն յ ա ն ը (Ազգապատում, Ա, էջ 517 - 518) Աղբիանոսյան է համարում նաև 516 - 526թթ. գահակալած Սամուել Արծկեցի կաթողիկոսին: Սակայն վերջինիս հիշող հայ մատենագիրները (Հովհ. Դրասխանակերտցի, Ասողիկ, Վարդան Արևելցի, Կիրակոս Գանձակեցի և ուրիշներ) ոչինչ չեն հաղորդում Աղբիանոսյան տնից նրա սերելու մասին:

ПАТРИАРШИЙ РОД АЛБИАНОВ

ВАРДАНЯН В.М.

Резюме

Род Албианов своими корнями восходит к жрецу Албиану, который с 301 года стал сподвижником Григора Просветителя. На протяжении IV – V вв. его потомки, соперничая с родом Григора Просветителя, играли огромную роль в христианизации Армении и ее историко-культурном развитии. Выражая национальные интересы Армении, албианы способствовали сохранению структуры и вероучения Армянской апостольской церкви. Будучи лояльными в отношении аршакидских царей, они добились их поддержки. Хотя и при албанских католикосах авторитет армянской церкви несколько снизился, но в какой-то мере наладились взаимоотношения светской и церковной властей, что способствовало внутренней стабильности страны.